# Վահան Տերյան

## Դժկամ նայում են ժայռերը խոժոռ

Դժկամ նայում են ժայռերը խոժոռ,
Տխուր խաղում են ալիքները ժիր.
Ընդունիր հոգիս մոլոր, մենավոր,
Վերջին աղոթքիս խոսքը մի՛ մերժիր:
Սողում են դանդաղ օրերը անծիր,
Կորած Է մթնում մոլոր իմ ուղին.
Քնքուշ խոսքերով թախիծըս ցրիր,
Անխոս ամոքիր ցաված իմ հոգին:
Մի անմեռ ցավ կա երկրում այս տխուր,
Մի ցուրտ, հոգեմաշ հուսահատություն
Կորցրած հավետ և՛ երազ, և՛ հուր,
Ես վերջին անգամ քե՛զ եմ աղոթում:
Դժկամ նայում են ժայռերը խոժոռ.
Տխուր խաղում են ալիքները ժիր.
Փայփայիր սիրտըս հավետ մենավոր,
Վերջին աղոթքիս խոսքը մի՛ մերժիր...

1905